



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ  
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

03 փետրվարի 2017 թ. № 36 - Ա/1

ք. Երևան

ՏԱՐԵՑՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ  
ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «գ» և «Ժ.1» կետերի՝ հրամայում եմ՝

1. Հաստատել՝

1) Տարեցների հանրապետական խաղերի (այսուհետ՝ Խաղեր) կանոնակարգը՝ համաձայն № 1 հավելվածի.

2) «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի № 1 հավելվածի № 1 աղյուսակի 08 բաժնի 01 խմբի 01 դասի «24. Տարեցների հանրապետական խաղերի անցկացում» ծրագրի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն № 2 հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Խաչիկ Ասրյանին:



Հ. ՌՈՍՏՈՄՅԱՆ

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### ՏԱՐԵՑՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ

#### I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Տարեցների հանրապետական խաղերի (այսուհետ՝ Խաղեր) նպատակներն են՝
  - 1) տարեց բնակչության առողջության ամրապնդում.
  - 2) առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, տեղերում բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում:
2. Խաղերի խնդիրներն են՝
  - 1) տարեց բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում, սոցիալական հավասարության խթանում, սպորտի մասսայականացում.
  - 2) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով առողջ կենսակերպի գաղափարների արմատավորում և հասարակությանը նրանց լիարժեք ինտեգրում:

#### II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Խաղերն անցկացվելու է երեք փուլով՝ համայնքային, մարզային և հանրապետական:
  - 1) 1-ին փուլի անցկացման պատասխանատվությունը կրում են քաղաքային և գյուղական համայնքները:
  - 2) 2-րդ փուլի կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության համապատասխան վարչությունները և բաժինները:
4. 2-րդ և 3-րդ փուլերի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):
5. Եզրափակիչ փուլի անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում է Նախարարության կողմից հաստատված մրցավարական հանձնաժողովը:

#### III. ԽԱՂԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

6. Խաղերին կարող են մասնակցել 63 տարեկանից բարձր տարիքի տարեց թոշակառու մարդիկ, որոնք ունեն բժշկի թույլտվություն:
7. 1-ին փուլը՝ համայնքներում՝ հուլիս ամսին.
  - 1) 2-րդ փուլն անցկացվելու է օգոստոս ամսին, «Վ մարզերում, Երևան քաղաքում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում.

2) 3-րդ՝ հանրապետական փուլ՝ սեպտեմբերի 7-ից 9-ը, «Ծաղկածորի գլխավոր մարզահամալիր» պետական փակ բաժնետիրական ընկերությունում:

8. Խաղերն անցկացվելու են 4 մարզաձևերից՝ շախմատ, շաշկի, Նարդի (կարճ) և Դարթս:

9. Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզից կարող են մասնակցել ընդամենը 10 մասնակից և 1 ներկայացուցիչ, 6 տղամարդ և 4 կին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի մասնակցելու միայն մեկ մարզաձևում:

№	Մարզաձևերը	Տղամարդ	Կին	Ներկայացուցիչ	Ընդամենը
1.	Շախմատ	1	1	-	2
2.	Շաշկի	1	1	-	2
3.	Նարդի	2	1	-	3
4.	Դարթս	2	1	-	3
		6	4	1	11

10. Խաղերի յուրաքանչյուր մարզաձևում որոշվում են 1-ից 12-րդ տեղերը հետևյալ կերպ՝ 1-ին տեղ՝ 12 միավոր, 2-րդ տեղ՝ 11 միավոր, և այդպես մինչև 12-րդ տեղը:

11. Խաղերի եզրափակիչ փուլի անցկացման կարգն ու պայմանները որոշում է Նախարարության կողմից ստեղծված մրցավարական հանձնաժողովը, իսկ 1-ին փուլի անցկացման կարգը տեղեկում՝ համապատասխան կազմկոմիտեները:

12. Խաղերի ծրագիրը և մրցումների անցկացման պայմանները

1.	Շախմատ (անհատական մրցումներ) (տղամարդ, կին)	-	Մրցումներն անցկացվում են շրջանային մրցակարգով, վիճակահանությամբ, խաղի տևողությունը՝ 20-ական րոպե:
2.	Շաշկի (անհատական մրցումներ) (տղամարդ, կին)	-	Մրցումներն անցկացվում են շաշկու գործող կանոնների համաձայն, շրջանային մրցակարգով, վիճակահանությամբ:
3.	Նարդի (անհատական մրցումներ) (տղամարդ, կին)	-	Մրցումներն անցկացվում են կարճ Նարդու կանոնների համաձայն, շրջանային մրցակարգով, վիճակահանությամբ:
4.	Դարթս (անհատական մրցումներ) (տղամարդ, կին)	-	Մրցումներն անցկացվում են վիճակահանությամբ, երկու փուլով: 1-ին փուլում որոշվում է առավելագույն միավոր հավաքած վեցնյակը, որն էլ անցնում է եզրափակիչ փուլ: Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի կատարելու 9 նետում:

#### IV. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

13. Խաղերի 1-ին փուլի մրցումներին առանձին մարզաձևերից 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված տարեցները պարզևատրվում են համայնքապետարանների համապատասխան կարգի հավաստագրերով:

1) Խաղերի 2-րդ փուլի մրցումներին առանձին մարզաձևերից 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված տարեցները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով:

14. Խաղերի 3-րդ փուլի առանձին մարզաձևերից 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված տարեցները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, դրամական մրցանակներով:

15. Արդյունքներն ամփոփվում են Խաղերի ավարտից անմիջապես հետո: 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված մարզերը պարգևատրում են հավաստագրերով, դրամական մրցանակներով, շնորհակալագրերով:

## V. ԾԱԽՍԵՐԸ

16. Խաղերի 2-րդ փուլի մրցումներին առանձին մարզաձևերից 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված մարզիկները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, իսկ մրցավաններին տրվում է սննդի գումար:

1) Խաղերի 3-րդ՝ եզրափակիչ փուլի անցկացման ծախսերը՝ մրցումների անցկացման համար մարզագույքի, մրցավարների գործուղում՝ ուղեգիր (*գիշերավարձ, սնունդ*), ճանապարհածախս, մրցավարներին դրամական պարգև, մասնակիցների գործուղում՝ ուղեգիր (*գիշերավարձ, սնունդ*), ճանապարհածախս, մարզաբազայի, ռադիոհանգույցի վարձակալում, հաղորդավարի ծառայություն, 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված մասնակիցներին հավաստագրեր, անհատական դրամական մրցանակներ՝

2) 1-ին տեղ՝ 100.0 հազար (*մեկ հարյուր հազար*) դրամ:

3) 2-րդ տեղ՝ 90.0 հազար (*իննսուն հազար*) դրամ:

4) 3-րդ տեղ՝ 80.0 հազար (*ութսուն հազար*) դրամ:


Բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, գովազդային նյութերի պատրաստման, նկարահանման, գրենական պիտույքների և տրանսպորտային ծախսերը հոգում է Նախարարությունը:

5) Խաղերի ծախսերն իրականացվում են Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեով նախատեսված ծրագրի շրջանակում:

## VI. ՀԱՅՏԵՐԸ

17. Խաղերի մասնակցության նախնական հայտերը ներկայացվում են Նախարարություն մինչև 2017 թվականի օգոստոսի 1-ը: Հարցերի դեպքում զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝ (011) 52-28-53, (011) 52-98-42:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ՝



Վ. ԷԼՈՅԱՆ